

# Քաղվածք

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ համայնքի 26 հունվարի 2012թ. ընդհանուր ժողովի թիվ 1 արձանագրությունից  
2012թ. հունվարի 26-ին տեղի ունեցավ Գեղհովիտ համայնքի ազգաբնակչության ընդհանուր ժողով

նախագահությամբ Ալֆրեդ Հակոբյանի

քարտուղարությամբ Միմոն Սուքիասյանի

Ժողովին մասնակցում էր ՀՀ Գեղարքունիքի փոխմարզպետ Ա. Ղուկասյանը՝ որպես մարզպետարանի ներկայացուցիչ և համայնքում գործող հասարակական - քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օրակարգ

1. Գեղհովիտ համայնքի ղեկավար Վ. Պողոսյանի հաշվետվությունը համայնքի ազգաբնակչությանը 2011 թվականին համայնքում կատարված աշխատանքների վերաբերյալ (գեկ. Վ. Պողոսյան)

Զեկուցողը ողջունեց ժողովի մասնակիցներին և նշեց, որ համաձայն ՀՀ Տ.Ի.Մ. օրենքի պահանջների, համայնքի ղեկավարը պարտավոր է հաշվետվություն տալ համայնքի ազգաբնակչությանը անցած տարվա կատարված աշխատանքների վերաբերյալ:

Նշեց, որ շուրջ 6600 առկա բնակչություն ունեցող Գեղհովիտ համայնքի 2011թ. բյուջեի եկամուտը կազմում է 92 745,8 հազար դրամ, որից սեփական եկամուտները՝ 14 694,8 հազար դրամ:

Սեփական եկամուտները հավաքագրվել են 103,7% - ով, որը կազմում է 15232,1 հազար դրամ: 2011թ. ծախսերը կազմել են 110 394,4 հազար դրամ:

Հաշվետու տարում գյուղի մշակույթի տանը կազմակերպվել են երեք համերգ, անցկացվել է բոնցքամարտի հանրապետական մրցաշար, մշակույթի տան խաղասրահները կահավորվել են ազգաբնակչության հանգիստը անցկացնելու համար անհրաժեշ պարագաներով:

2011 թվականի ընթացքում գյուղի ամենաանապահով 69 ընտանիքների տրամադրվել է 5 միլիոն դրամական օգնություն:

Հայրենական պատերազմի վետերաններին և զոհված ազատամարտիկների ընտանիքներին տրվել է 380 հազար դրամի պարգևավճար:

Ուշադրության կենտրոնում են եղել գյուղամիջյան ճանապարհների նորոգումը, գյուղամիջյան փողոցների գիշերային լուսավորության ցանցի նորոգումն ու ընդլայնումը, խմելու և ոռոգման ջրագծերի նորոգումը և ազգաբնակչության շուրջօրյա ջրամատակարարում ապահովելու հարցը:

Խմելու ջրագծի և կոյուղագծի նորոգման համար ծախսվել է 1 839,7 հազար դրամ:

Հաշվետու տարում Գեղհովիտ գյուղում կազմակերպվել է աղբահանություն, ծախսվել է 960,0 հազար դրամ գումար:

Տարվա ընթացքում կազմակերպվել է Գեղհովիտ և Լեռնակերտ գյուղերի փողոցների ձյան մաքրման աշխատանքներ, որի համար ծախսվել է 800,0 հազար դրամ, արդյունքում ձմեռային սեզոնին համայնքի բոլոր ճանապարհները մաքրված են եղել և անցանելի:

3680,0 հազար դրամով ձեռք է բերվել ԴՏ մակնիշի բուլդոզեր տրակտոր, որը ծառայում է իր նպատակին, այն է՝ կատարում է ձյան մաքրման և հողային աշխատանքներ համայնքի կարիքների համար:

9690,9 հազար դրամի կատարվել է փողոցային լուսավորության ցանցի ընդլայնման աշխատանքներ, կառուցվել են նոր էլեկտրագծեր: Փողոցային լուսավորության ցանցը ծախսել է 2099,4 հազար դրամի էլեկտրոէներգիա:

2011թ. տարեվերջին շահագործման հանձնվեցին համայնքի տարածքի 4634 մետր 3-րդ կարգի նորոգված ջրանցքները: Այդ ուղղությամբ հաշվետու տարում կատարվեց 1978,6 հազար դրամ համաֆինանսավորում, ինչի արդյունքում սկզբնաղբյուրից վերցրած ոռոգման ջուրը անկորուստ հասցվել է գյուղացիների բանջարանոցներ:

900,0 հազար դրամ ծախսերի հաշվին կատարվել է գյուղամիջյան փողոցների և տների հասցեների պիտակների ձեռքբերում և տեղադրում:

Հաշվետու տարում կատարվել է համայնքի մտուր - մանկապարտեզի շենքի բարձր որակի հիմնանորոգում: Համայնքը արդեն ունի բարեկեցիկ և ժամանակակից մանկապարտեզի շենք: Նախակրթական հաստատությանը 2011թ. տրամադրվել է 12 680,0 հազար դրամ գումար, որից 3680,0 հազար դրամը՝ գույքի ձեռքբերման համաֆինանսավորման համար: Մանկապարտեզի համար ձեռք է բերվել անհրաժեշտ նոր գույք՝ նորմալ նախադպրոցական կրթություն իրականացնելու համար:

Զեկուցողը նշեց, որ չնայած կատարված աշխատանքներին՝ մեր համայնքը ունի նաև հրատապ լուծում պահանջող հարցեր: Թեև բավարար քանակությամբ խմելու ջուր է մտնում գյուղ, բայց քայքայված ու կոռոզիայի է ենթարկված ջրագծերի ներքին ցանցը:

Պարբերաբար տեղի են ունենում վթարներ, որոնք խանգարում են նորմալ ջրամատակարարմանը: Ընթացիկ տարում կհայթայթվեն ֆինանսական միջոցներ ավելի անմխիթար տեղամասերում խողովակաշարերը նորով փոխելու համար:

Նորոգման կարիք ունի «Բառոժի» ռոռգման առուն, որը սպասարկում է գյուղի 1/3 մասի տնամերձ հողերը:

Ասֆալտապատման կարիք ունի գյուղամիջյան 1-ին փողոցը: Այդ աշխատանքը ուշադրության կենտրոնում է, և բազմիցս դիմել եմ հանրապետության և մարզպետարանի ղեկավարությանը հարցը լուծելու համար:

Գյուղի հիմնահարցերը հնչեցնելուց հետո զեկուցողին հարցեր չտրվեցին:

Ժողովի ճնշող մեծամասնության կողմից համայնքի ղեկավարի 2011թ. կատարած աշխատանքը գնահատվեց բավարար:

Նախագահ՝

Ա. Հակոբյան

Քարտուղար՝

Ս. Սուքիասյան